ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

Սեպտեմբերի 21—23-ը Երևանում տեղի ունեցավ հայոց լեզվի պատմության և բարբառագիտության, համեմատական լեզվաբանության, տեքստաբանության, բառագիտության և բառարանագիտության տարբեր խնդիրների քննությանը նվիրված հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողովը, որի աշխատանքներին մասնակցում էին Սովետական Միության և արտասահմանյան մի շարք երկրներից հրավիրված անվանի լեզվաբաններ, բանասերներ, հայագետներ, պատմաբաններ։

Գիտաժողովի լիագումար նիստը բացվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի մեծ դահլիճում։ Հանդես գալով ներածական խոսքով, հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ց. Ե. Խոջամիրյանը մասնավորապես ասաց, որ հայոց լեզվի մասնագետների միջազգային այս գիտաժողովը, անշուշտ, նոր և արգասաբեր ազդակ կհանդիսանա նրանց հետագա գիտական ուսումնասիրությունների համար։ Նա նաև նշեց գիտնականների համագործակցության, գիտական տարբեր կենտրոններում աշխատող հայագետների հանդիպումների, նրանց աշխատանքների փոխհամաձայնեցման կարևոր նշանակությունը։

Լիագումար նիստում լսվեցին գիտական մի շարք զեկուցումներ։ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ջանուկյանը զեկուցեց «Հայասայի լեզվի-վիճաբեր և հայերենը» թեմայով։ «Նախահայերենի հնդեվրոպական հիմքը. վերականգնման սկզբունքները» զեկուցումով հանդես եկավ Կ. Դ. Շմիդտը (Բոնն, ԳՖՀ)։ ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Թ. Վ. Գամկրելիձեն (Թբիլիսի) խոսեց «Ջայնածերպայիններին տեսության» լույսի ներքո հին հայերենի բաղաձայնական համակարգի հնատիպության մասին։ Ջ. Բոլոնեզին (Միլան, Իտալիա) հանդես եկավ «Հայոց լեզվի բառագաղարի շերտավորումը. հունարենից կատարած իմաստային փոխառությունները» թեմայով, սկ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Է. Բ. Աղայանը՝ Հայկական տոմարական համակարգը և հայոց թվականները» թեմայով։ Է. Հեմփը (Չիկագո, ՄՆ) խոսեց io— և —ia-հիմքով գոյականների ձևման մասին, Ց. Ս. Ստեփանովի (Մոսկվա) զեկուցումը նվիրված էր հայերենում հնդեվրոպական կատարյալի համակարգային հետքերին։ Է. Շյուցը (Բուդապեշտ, Հունգարիա) անդրադարձավ միջին հայերեն տեքստերում օտար բառերին։

Հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողովի աշխատանքները այնուհետև շարունակվեցին երեք մասնաճյուղերով՝ համեմատական լեզվաբանություն (ղեկ. Է. Գ. Թումանյան և Թ. Վ. Գամկրելիձե), լեզվի պատմություն և բարբառագիտություն (ղեկ. Ն. Ա. Պառնասյան և Է. Շյուց), տեքստաբանություն, բառագիտություն և բառարանագիտություն (ղեկ. Հ. Խ. Բարսեղյան և Լ. Ս. Հովսեփյան)։ Մասնաճյուղային 15 նիստերում գիտաժողովի մասնակիցները կարդացին և քննարկեցին ավելի քան 100 զեկուցումներ և հաղորդումներ, որոնք նվիրված էին հայոց լեզվի ծագմանն ու կազմավորմանը, հայերենի և դրացի լեզուների կապերին, հայերենի և նրա բարբառների պատմական զարգացման օրինաչափություններին, ժամանակակից հայերենի վիճակին և այլ բնույթի հարցերի։

Գիտաժողովի մասնակիցների համար կազմակերպվեց ուղևորություն դեպի Բյուրական և Ամբերդ։ Նրանք եղան նաև Դիլիջանում, ծանոթացան հայ միջնադարյան ճարտարապետության նշանավոր հուշարձաններից մեկի՝ Հաղարծնի վանքային համալիրի հետ։ Երևանում այցելեցին ժամանակակից արվեստի թանգարան, ունկնդրեցին կամերային երաժշտության համերգ, դիտեցին Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետը։

Հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողովի եզրափակիչ լիագումար նիստը տեղի ունեցավ սեպտեմբերի 23-ին՝ ՀՍՍՀ ԳԱ մեծ դահլիճում, որի ժամանակ հանրագումարի բերվեց գիտաժողովի մասնաճյուղերի գործունեության արդյունքները։ Մասնաճյուղերի նախագահներ բանասիրական գիտությունների դոկտորներ Է. Գ. Թումանյանը (Մոսկվա), Ն. Ա. Պառնասյանը, Հ. Խ. Բարսեղյանը հանդես եկան հաղորդումներով, որոնցում ի մի բերեցին մասնաճյուղերում քննարկված զեկուցումները։

Գիտաժողովի սովետական և արտասահմանյան մասնակիցների անունից Է. Շյուցը (Հունգարիա), Ց. Ս. Ստեփանովը (Մոսկվա) շնորհակալություն և երախտագիտություն հայտնեցին գիտաժողովի կազմակերպիչներին՝ նման արդյու-

նավետ գիտական աշխատանքի կազմակերպման համար։

Գիտաժողովի աշխատանքներն ամփոփեց գիտաժողովի կազմկոմիտեի նախագահի տեղակալ, ՀՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ջահուկյանը։ Նա գնահատեց և ամփոփեց գիտաժողովի աշխատանքներն ու արդյունքները, ընդհանրացրեց ձեռք բերված նվաճումները։ Միաժամանակ Գ. Ջահուկյանը նշեց հայագիտության հետագա զարգացման հիմնական ուղիները և այն դերը, որ կունենա հայագիտության զարգացման համար հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողովը։

ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150 ԱՄՅԱԿԸ

1987 թ. սեպտեմբերի 24-ին ՀՍՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում կայացավ գիտական նստաշրջան՝ նվիրված հայ վիպասանության ամենամեծ դեմքերից մեկի՝ Պ. Պռոշյանի ծննդյան 150 ամյակին։

Բացման խոսքով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը։ Ըստ արժանվույն գնահատելով արձակագրի գրական-հասարակական գործունեությունը, նա նշեց, որ Պ. Պռոշյանը հայ ռեալիստական վիպագրության առաջին նշանավոր վարպետն է, ընդհանրապես հայկական ռեալիզմի հիմնադիրներից ու խոշորագույն դեմքերից մեկը։ Իր արմատներով ու ամբողջ ստեղծագործությամբ կապված լինելով անցյալի կյանքին ու կենցաղին, վիպասանը եղել է դրանց հավատարիմ տարեգիրը, միշտ ելակետ է ունեցել իրենց շրջապատող կենսական կոնկրետ փաստերը, իրողությունները, որոնք կարողացել է դարձնել գեղարվեստական տիպականացման հիմք։

Ավելի քան 40-ամյա գրական գործունեության ընթացքում՝ «Սոս և Վարդիթերից» մինչև «Հունոն» և դարասկզբին գրած վերջին անավարտ երկերը կազմում են մի շատ ինքնատիպ գեղարվեստական աշխարհ։ XIX դ. արևելահայ գյուղաշխարհի համայնապատկերն է դա՝ սկսած պարսկական տիրապետության վերջին տասնամյակներից մինչև մեր դարի սկիզբը։ Հայ գյուղի կյանքի ու կենցաղի, մարդկային բնավորությունների, սոցիալական և բարոյական հարաբերությունների, մտածողության և պատկերացումների մի լայն ու հարուստ պատկերասրահ է նրա ստեղծագործությունը, որին դիմել են և կդիմեն ընթերցող սերունդները, ասաց Էդ. Ջրբաշյանը։

Այնուհետև լսվեցին մի շարք ուշագրավ և բովանդակալից զեկուցումներ։ Բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Սարինյանը կարդաց «Ժամանակը Պ. Պռոշյանի ռեալիզմի պոետիկայում» թեմայով զեկուցումը։ Սոցիալական ժամանակը միանգամայն հետաքրքիր օրինաչափություն է գծում Պռոշյանի աշխարհայացքի և ռեալիզմի գեղարվեստական համակարգում, ասաց նա։ Կրկնելով իրերի շարժումը կարգավորող մի ուրույն ֆունկցիա, այդ կատեգորիան հանդես է գալիս որպես փիլիսոփայական ելակետ և աշխարհընկալման ուղղություն։ Ներկա ժամանակն ըստ Պռոշյանի իռացիոնալ է, այն բնական չէ, ուրեմն և իրական չէ։ Իրականը անցյալն է, որ հրապուրում է իր անփոխարինելի հուշերով, մնայուն արժեքներով և գոյության կայուն հիմքերով։ Անցյալի ու ներկայի անջատման այս կիզակետում Պռոշյանն ընկալեց սոցիալական ժամանակը և իր հոգու ամբողջ խորությամբ վերապրեց ճեղքվող աշխարհի ողբերգական սարսափը։ Երկու աշխարհի սահմանագիծը անցնելի ա՞յս է առաջ բերում մարդկանց հոգեբանության մեջ, իսկ հեռացող անցյալի ավերները տանում են թանկ ու անփոխարինելի մի բան, որ անցնում է առհավետ։ Այսպես էլ անցյալ ժամանակը Պռոշյանի գեղարվեստական աշխարհում հանդես է գալիս որպես իդեալի ուղեցույց, սյուժեների սկիզբ և գործողության նպատակ։ Այս ելակետով էլ գրականագետը վերլուծում է «Սոս և Վարդիթեր», «Կռվածաղիկ», «Բղդե», «Ցեցեր», «Հացի խնդիր» ստեղծագործությունները։

Որպես ռեալիստ գեղագետ, ունենալով պատմականության խոր զգացողություն և ցույց տալով նահապետական համայնքի կործանման անխուսափելիությունը, Պռոշյանը, սակայն, իբրև մտածող հավատում էր սոցիալական իր իդեալի կայունության պատրանքին։ Սա ազդում է նրա գեղարվեստական մտածողության վրա, կանխորոշելով սյուժեների ու սոցիալ-հոգեբանական կոնֆլիկտների լուծումը։ Բախվում են հինն ու նորը, կրքերի սուր տարերքի մեջ առնում մարդկային արժեքների կշռույթը, ու թեև պատմությունը գործում էր հնի կործանման անխախտ տրամաբանությամբ, սակայն Պռոշյանը սուբյեկտիվորեն կարգավորում է իրերի ընթացքը, կյանքի փլատակների վրա կառուցում նահապետական կյանքի ռոմանտիկական ուտոպիան։ Այստեղից էլ սկիզբ է առնում նրա հոգեկան դրաման, նրա հոռետեսությունը ապագայի հանդեպ և անհետացող անցյալի հովվերգական էլեգիան, վերջում նշեց Ս. Սարինյանը։